ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԵՌԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔԻ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿ ԳԵՐ. Տ. ՀԱՅԿԱԶՈՒՆ ԱՐՔ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ԶԵԿՈՒՅՑԱԳԻՐԸ ԻՐ ԵՐԿԱՄՅԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հունիսին Մայր Աթոռ ժամանեց Հնդկաստանի և Հեռավոր Արևելքի հայրապետական պատվիրակ Գեր. Տ. Հայկազուն արքեպիսկոպոսը, որը իր երկամյա գործունեության զեկուցագիրը ներկայացրեց Վեհափառ Հայրապետին և որը գոհունակությամբ ընթերցվեց և արձանագրվեց Գերագույն հոգևոր խորհրդի հունիսի 28-ի նիստում:

Տ. Հայկազուն արքեպիսկոպոսը իր երկամյա գործունեության ընթացքում ծավալել է թեմական-կազմակերպչական, եկեղեցական-մշակութային բեղուն գործունեություն և կանոնավոր զեկուցագրերով այդ բոլորը հաղորդել Մայր Աթոռ, Վեհափառ Հայրապետին՝ իրեն հատուկ բերախոսությամբ և կանոնավորությամբ: Սրբազանը անձանձրույթ կերպով և օրը օրին պահել է նաև հազարավոր էջեր ընդգրկող, հետաքրքիր, շահեկան, բովանդակալից իր օրագրությունը, ուր խորհրդածություններ, վերլուծություններ, ընդհանրացումներ կան Սփյուռքի ներ ազգային-եկեղեցական կյանքի, մեր մտահոգությունների և ազգապահպանման կարևոր և այլ հարցերի մասին:

Ստորև քաղվածաբար մեր ընթերցողներին ենք ներկայացնում հատվածներ Սրբազանի զեկուցագրից:

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Վեհափառ Տե՛ր,

1964 թվի ապրիլի 27-ին Ձերդ Սուրբ Օծության օրհնությունը առնելեն և Իջման Ս. Սեղանի առջև աղոթքս կատարելեն հետո, ինքնաթիռով Մոսկվա կմեկնիմ, երթալու համար Հնդկաստան ու Հեռավոր Արևելք, որպես Հայրապետական Պատվիրակ, ինչպես կհրահանգե Ձեր ապրիլ 11 թվակիր կոնդակը ուղղված ինձի և Հնդկաստանի ու Ավստրալիայի Եկեղեցական վարչությանց, ինչպես և Ձեր տիրախնամ ժողովրդին:

1964 թվականի մայիսի 10-ին Մոսկվայեն կմեկնիմ Կահիրե, ուր կմնամ շուրջ երկու շաբաթ Ձեր հրահանգին համաձայն:

Առաջին իսկ կիրակին կպատարագեմ Կահիրեի հայոց Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցիին մեջ և քարոզիս ընթացքին եգիպտահայոց առաջնորդ գեր. Տ. Մամբրե սրբազանին, թեմական, եկեղեցական, ազգային-մշակութային մարմիններուն և Ձեր հավատացյալ ժողովրդին կհաղորդեմ Ձեր հայրապետական օրհնությունն ու ողջույնները:

Տ. Հայկազուն արքեպիսկոպոսը հրաժեշտ է առնում Հնդկաստանի հանրապետության նախագահ դոկտ. Ռադհակրիշնայից։

Ցավալի է արձանագրել, որ երբեմնի հայաճոծ ու պատվական այս գաղութի վիճակը այսօր այնքան ալ նախանձելի չէ:

Առանց հիմնական պատճառի մը ժողովուրդը մեծ թիվով կգաղթե Ավստրալիա, Կանադա և այլ երկիրներ:

Ազգային-եկեղեցական մարմինները այս տխուր վիճակի առջև քիչ մը մտահոգված տեսա զուտ հայապահպանման, հայրենասիրական տեսակետե: Անոնց մտահոգությունը Սիյուռքի բովանդակ ժողովրդի մտահոգությունն է:

Մայիսի 16-ին ինքնաթիռով կմեկնիմ Հնդկաստան և 17-ին կհասնիմ Բոմբեյ: Կդիմավորեն Բոմբեյի Եկեղեցական վարչության անդամներ Ռ. Ծամլյանը և Ա. Եղիազարյանը: Բոմբեյի հայոց Ս. Պետրոս եկեղեցիին մեջ մասնավոր աղոթքե մը վերջ ներկա սակավաթիվ ժողովրդին կհաղորդեմ Ձեր օրհնություններն ու ողջույնները: Բոմբեյ կմնամ երեք օր՝ այցելելով փոքրաթիվ հայ համայնքի բոլոր անդամներուն տուները, հոգեպես մխիթարելով բոլորին:

Այսօր Բոմբեյի մեջ կապրին շուրջ 30 հայեր:

Մայիս 20-ին կմեկնիմ Քոչին, հարավային Հնդկաստան, Քոթայամի մեջ մասնակցելու հանուն Ձերդ Վեհափառության, Մալաբար քույր եկեղեցիի նորընտիր կաթողիկոսի գահակալության հանդիսությանց: Թե՛ Քոչինի և թե Քոթայամի մեջ կդիմավորվինք եկեղեցական թափորներով, խանդավառ ցույցերով և հրավառությամբ, արևելյան միաբնակ ուղղափառ քույր եկեղեցիներու այլ պատգամավորներուն հետ:

Երեկոյան եկեղեցական պատվիրակությանց պատվին կտրվի պաշտոնական ընթրիք, ուր Ձերդ Վեհափառության եղբայրական ողջույնները կհաղորդեմ նորընծա կաթողիկոսին և Մալաբար բարձրաստիճան հոգևորականության, որոնք երախտագիտությամբ կհիշեն Ձեր շնորհաբեր այցելությունը Քոթայամ 1965 թվի նոյեմբերին:

Մայիսի 22-ին Քոթայամի կաթողիկոսարանի մոտ, տաճարի առընթեր, հսկա տաղավարի ներքո կկատարվի նորընտիր կաթողիկոսի գահակալության հանդեսը, քույր եկեղեցիներու պատվիրակներու, այլ հարանվանություններու ներկայացուցիչներու և խուռներամ բազմության ներկայությամբ: Մալաբար ուղղափառ եկեղեցին չունի կաթողիկոսական օծման կարգ:

Հանդիսության կնախագահե Անտիոքի ուղղափառ պատրիարքը, որ ողջույնի ատենը իր ձեռքը նորընտիր կաթողիկոսի վրա դնելով երեք անգամ զինքը անվանեց Տ. Տ. Վասիլիոս Ուգեն Ա. կաթողիկոս Մալաբար եկեղեցիի, մինչ հոգևորական դասը և ամբողջ հավատացյալները միաբերան կվկայեին՝ արժանի է: Բոլոր եպիսկոպոսներս զգեստավորված մեր ազգային եկեղեցական տարազներով բեմի վրա էինք:

Հանուն հայ եկեղեցիի և Ձերդ Վեհափառության, արարողության ժամանակ շնորհավորեցի նորընտիր կաթողիկոսին, անոր հանձնելով Ձեր նվերը՝ գոհարազարդ ձեռաց խաչ, որով առաջին անգամ անիկա օրհնեց իր ժողովրդին: Մայիսի 25-ին մասնակցելեն հետո կաթողիկոսի գահակալության ատթիվ կազմակերպված այլ հանդիսությանց, հրաժեշտ առի Նորին Սրբություն Վասիլիոս Ուգեն Ա կաթողիկոսեն և վերադարձա կրկին Բոմբեյ: Մայիսի 31-ին հանդիսավոր Ս. պատարագ մատուցեցի Բոմբեյի հայոց Ս. Պետրոս եկեղեցիի մեջ և ի ժամ Ս. Պատարագի կարդացվեցավ Ձեր 1964 ապրիլ 11 թվակիր սրբատառ կոնդակը: Այնուհետև քարոզեցի կոնդակի բովանդակության և ոգիի համապատասխան, շեշտելով Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և մայր հայրենիքի կենսանորոգ գաղափարներու ջերմացնող, միացնող խորհուրդը:

Երեկոյան հայրապետական պատվիրակին պատվին տրվեցավ ճաշկերույթ մը, որուն ներկա էր Բոմբեյի ամբողջ հայ համայնքը: Ներկաներեն շատ շատերը խուռ առին ճաշի ժամանակ և զգացված բառերով, ջերմ արտահայտություններով անգամ մը ևս հավաստեցին իրենց որդիական սերն ու հավատարմությունը դեպի Մայր Աթոռ Ս. Էջմիածինը և մայր հայրենիքը:

Այդ օրերուն Բոմբեյը դեռևս չուներ իր ծխատեր քահանան: Կալկաթայեն պարբերաբար քահանան կամ վարդապետը կուգար հոգալու տեղի հոգևոր կարիքները: Մեր առաջին մտածումը եղավ Բոմբեյը օժտել քահանայով մը: Բոմբեյի եկեղեցական վարչությունը խոստացավ զորավիգ ըլլալ Հայրապետական Պատվիրակին՝ օր առաջ Բոմբեյի համար հոգևոր պաշտոնյա մը ունենալու հարցին մեջ:

Բոմբեյի հայոց նոր եկեղեցին կառուցված է երեք տարիներ առաջ, հին եկեղեցիի հողամասին վրա: Սիրուն, կոկիկ հայկական եկեղեցի մըն է Ս. Պետրոսը: Եկեղեցիի կողքին կբարձրանա յոթ հարկանի հասութաբեր շենքերու շարք մը՝ խանութներով, քահանայի բնակարանով և գրասենյակներով: Հայկական այդ կալվածը ամսական ութ հազար ռուպիի վարձ մը կբերե: Շենքերու այդ հասույթեն կհոգացվեն եկեղեցիի ծախքերը, քահանայի ամսականը: Վարչության կարգադրությամբ Բոմբեյի հնդկական միջնակարգ դպրոցի մը մեջ հայ ուսանող մը կը-

պահվի եկեղեցու դրամով: Բոմբեյի հայ համայնքը այսօր ունի շուրջ հիսուն հազար ռուպի պատրաստ գումար մը, որը պիտի հատկացվի տեղի հայ գերեզմանատան բարեկարգման ծախքերուն:

Որպես Հայրապետական Պատվիրակ, մի քանի անգամ ներկա եղա Բոմբեյի Եկեղեցական վարչության ժողովներուն: Եկեղեցական վարչության, մինչև ցարդ գործող կանոնադրության համաձայն, որևէ մեկ հոգևորական չէր մասնակցեր ժողովներու և ձայն չուներ համայնքի ազգային-եկեղեցական գործերուն մեջ: Հոգևորականը զուտ հոգևոր պաշտոնյա մը կնկատվեր: Այս ոչ կանոնական և ոչ ճիշտ կացությունը բացատրեցի իմ հաճախակի այցելություններուն ընթացքին և կարողացա համոզել, որ վերաքննության ենթարկվի գործող հին կանոնադրությունը, որպեսզի խմբագրվի նոր կանոնադրություն մը, որը կառավարության վավերացումեն ետ գործադրվի համայնքի մեջ, համաձայն տեղական օրենքներու և համապատասխան հայ եկեղեցիի կանոնական ոգիին, ավանդության և ներկա պայմաններուն: Այս մտածումներու լույսի տակ գումարվեց Բոմբեյի հայ համայնքի ընդհանուր ժողովը, ուր բարեփոխության ենթարկվեցավ հին կանոնադրությունը և միաձայն որոշում ընդունվեցավ հետևյալ հիմնական կետերի շուրջ. Բոմբեյի հայ համայնքը և եկեղեցին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի իշխանության, իրավասության ենթակա համայնք է: Այն պարագային, երբ Բոմբեյի մեջ հայ եկեղեցիի անդամ հինգ հայեր կմնան, Բոմբեյի հայ եկեղեցիի եկեղեցական կալվածներու, անոնց եկամուտներու, ամբողջ անշարժ գույքին տերը կհանդիսանա Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը: Բոմբեյի հայոց Ս. Պետրոս եկեղեցին կգտնվի Ամենայն Հայոց Հայրապետի կողմե նշանակված կամ հաստատված հոգևորականի հոգևոր իրավասության տակ: Այս նոր կանոնադրությունը արդեն վավերացված է Բոմբեյի տեղական իշխանության կողմե և ունի պետական օրենքի ուժ, համայնքային գործող այլ կանոնադրություններու նման:

Հունիսի 3-ին հրաժեշտ առնելով Բոմբեյի հայ համայնքեն կմեկնիմ ինքնաթիռով Կալկաթա, դեպի իմ պաշտոնական կեդրոնատեղին:

Կալկաթայի օդանավակայանի մեջ կդիմավորեն հոգևոր հովիվ Տ. Գեղամ աբեղա Զաքարյան, Կալկաթայի Եկեղեցական վարչության անդամներ և հավատացյալներու հոծ բազմություն մը:

Հանդիսավոր երթով մուտք կգործենք Կալկաթայի հայոց Նազարեթա Ս. եկեղեցին՝ Հայկական փողոցի վրա, և մասնավոր աղոթքե մը հետո Զերդ Վեհափառության հայրապետական օրհնություններն ու ողջույնները կհաղորդեմ բոլոր ներկաներուն:

Որպես Հայրապետական Պատվիրակ ինձի կհատկացվի առաջնորդարանը, իբր պաշտոնատեղի և բնակարան իր բոլոր հարմարություններով:

Հունիսի 7-ին, կիրակի, կմատուցանեմ անդրանիկ Ս. պատարագը: Իժամ Ս. պատարագի Տ. Գեղամ աբեղան կկարդա Զեր ապրիլ 11 թվակիր սրբատառ կոնդակը, ի լուր խուռներամ բազմության և ամբողջ ուսանողության: Հայրապետական կոնդակի ընթերցումեն հետո, կքարոզեմ կոնդակի ոգով՝ ծանրանալով Մայր Աթոռ Ս. Էջմիածնի կատարած հոգևոր, եկեղեցական, մշակութային և հայրենասիրական մեծ առաքելության վրա:

Հաջորդ օրերուն առաջնորդարանի մեջ կընդունեմ բազմաթիվ պաշտոնական այցելություններ և շնորհավորություններ Հայրապետական Պատվիրակ նշանակվելուս առիթով:

Հաջորդ շաբաթ կփոխադարձեմ պաշտոնական այդ այցելությունները: Առաջին այցելությունս կուտամ Գեղամ աբեղայի և Եկեղեցական վարչության անդամներուն հետ, արևմտյան Բենկոլի կառավարիչ օրիորդ Բաթմուջա Նայդուին, Կալկաթայի գլխավոր կառավարիչ Բի Սի Սենին, Կալկաթայի անգլիական եկեղեցիի պետ Միտրոպոլիտ Լակ Դասա Դը Մելին, հաղորդելով առաջին հերթին Զերդ Վեհափառության ողջույններն ու օրհնությունները և իմ պաշտոնի ու դիրքի հանգամանքները. ամեն կողմ կգտնեմ ջերմ և սրտագին վերաբերմունք, կլսեմ դրվատալից արտահայտություններ հայ եկեղեցիի և հնդկահայ մեր ժողովրդի մասին:

Հաջորդ օրերուն կայցելեմ նաև Կալկաթահայ բոլոր կազմակերպություններուն, մարմիններուն, ակումբներուն և բոլոր հայ ընտանիքներուն, տանելով Էջմիածնի օրհնությունը, մայր հայրենիքի պատգամը և Ամենայն Հայոց Հայրապետի ողջույնները: Իմ մասնավոր հոգածության, ուշադրության առարկա կդառնան Կալկաթայի Մարդասիրական Ճեմարանը և Դավթյան Օրիորդաց վարժարանը:

Իմ պաշտոնավարության առաջին երկու տարիներու ընթացքին կրոնական նոր եռանդ մը, հայրենասիրական, ազգային նոր շունչ մը կարծես արթնացավ բոլորիս սրտերուն մեջ, մեզ կապելով մեր հավերժական

սրբություններուն՝ Ս. Էջմիածնի և Մայր Հայրենիքի հետ: Մեր ժողովուրդը չի մեռնիր, չուծանար, որքան ատեն կապված կմնա իր մայր եկեղեցիին և հայրենական սրբություններուն:

Կալկաթայի մեջ ունինք երեք եկեղեցիներ, մեկը առաջնորդանիստ մայր եկեղեցին՝ Նազարեթա Ս. եկեղեցի անունով՝ կառուցված 1707 թվին: Եկեղեցիի ամբողջ շրջապատը ազգային գերեզմանատունն է, ուր թաղված են Կալկաթայի ազգային եկեղեցական կյանքի մեջ մեծ վաստակ ունեցած հոգևորականներ, մտավորականներ և ազգային բարերարներ: Երկրորդ եկեղեցին՝ Թինգրա գերեզմանատան Ս. Երրորդության եկեղեցին է՝ կառուցված 1867 թվին: Երրորդ եկեղեցին Ս. Գրիգոր Լուսավորիչ՝ կառուցված է 1906 թվին: Այս երեք եկեղեցիներն ալ կպահպանվին նախապես եղած մասնավոր կտակներով և տնտեսապես ապահով Աստվածածին եկեղեցին՝ կառուցված 1758 թվականին:

Սեր պաշտոնավարության ընթացքին հաճախ կայցելեինք այս պատմական եկեղեցիները, մասնավոր ուխտի օրեր նշանակելով և Կալկաթայեն կերթայինք ուխտավորական հոծ բազմությամբ մը, պատարագելու տոնի օրերուն: Կալկաթայի հայոց երեք եկեղեցիներն ալ անխափան կանոնավորությամբ կկատարեին եկեղեցական արարողությունները ու պաշտամունքները:

Հարավային Հնդկաստանի արևելյան ծովափին կգտնվի Մադրաս մեծ քաղաքը, ուր **Հայկական** կոչված մեծ պողոտային վրա է Ս. Աստվածածին եկեղեցին՝ կառուցված 1712 թվին: Մադրաս ժամանակին եղած է հայկական լավագույն գաղութը և մշակութային կեդրոնը՝ իր վարժարանով և մամուլով: Այստեղ Տ. Հարություն ավագ քահանա Շմավոնյանը լույս ընծայեց առաջին հայ

Հնդկաստանի վարչապետ Ինդիրա Գանդին և Տ. Հայկազուն արք-ը:

վիճակ մը ունին: Երեք եկեղեցիներն ալ ունեն իրենց ուխտի օրերը:

Կալկաթայեն մոտ 50 կմ հեռավորության վրա կգտնվի Չինսուրայի Ս. Հովհաննես Մկրտիչ անունով եկեղեցին, կառուցված 1695 թվականին և 150 կմ հեռավորության վրա՝ Սայդաբադի կամ Մուրշիտաբադի Ս. լրագիրը՝ **Ազդարար** 1794—96 թվականներուն: Սույն եկեղեցիի շրջափակին մեջ թաղված է Տ. Շմավոնյան քահանան, որուն գերեզմանը վերանորոգեց Կալկաթայի Հայկական ընկերակցությունը և որուն իշխանության ներքև կգտնվին եկեղեցիին և կաղվածներուն մատակարարությունը:

Մադրասի եկեղեցիի գավթին մեջ թաղված են **Շահմիր Սուլթանումյան** մեծ գերդաստանի ննջեցյալները: Մադրասը նշանավոր է նաև Զուղայեցի վաճառական Ոսկանով, որ շինած է քաղաքի մեծ գետի վրայ քարաշեն երկար կամուրջ մը, և Ս. Թովմաս Եկեղեցվո քարյա աստիճանները լեռան ստորոտեն մինչև գագաթը: Այս եկեղեցին, որուն մեջ կան հայկական արձանագրություններ և մի քանի հայագիր տապանաքարեր, այժմ կգտնվի կաթոլիկներու ձեռքը: Ոսկան մասնավոր կտակ մը ևս թողուցած է իր կամուրջի և աստիճաններու նորոգության համար: Մադրասի մեջ այժմ ունինք 4—5 հայեր միայն, բայց մենք տարին մեկ կամ երկու անգամ կայցելենք, իսկ Հայկական ընկերակցությունը Կալկաթայի, բազմիցս:

Հնդկաստանի մայրաքաղաք Դելիի մեջ ունենք գերեզմանատուն մը իր փոքրիկ մատուռով, որը այժմ անգործածելի է. և հնդիկ գաղթականներու բնակարան դարձած է: Այստեղ կերեին տակավին մի քանի երևանցի և թիֆլիսեցի ննջեցյալներու գերեզմաններ: Կալկաթայի Հայկական ընկերակցության ղեկավարության ներքև կգտնվի գերեզմանատունը:

Կալկաթան ունի երկու վարժարան և մեկ ծերանոց: Մարդասիրական ճեմարանը հիմնված է 1821 թվին և կը շարունակվի մինչև այսօր: Հիմնադիրները եղած են Մնացական Վարդանյան և Աստվածատուր Մուրադխանյան: 1921 թվին ջուղայեցի երևելի վաճառական Դավիթ Ավետիք Դավթյան կհիմնե իր անունով աղջկանց վարժարան մը, և կթողու իբրև կտակ պատկառելի գումար մը և կալվածներ: Այս երկու վարժարանները տարբեր շենքերու մեջ, բայց դասավանդությանց ժամանակ կմիանան: Երկու դպրոցներն ալ կսկսին մանկապարտեզեն և կվերանան մինչև 11-րդ դասարան, միջնակարգ ուսումով: Տիրապետող լեզուն անգլիերեն է, զուգընթաց հայերեն՝ գրաբար և աշխարհաբար, և բենգալերեն: Զույգ դպրոցներու երկսեռ աշակերտներու թիվն է մոտավորապես 140—150:

Կալկաթայի ծերանոցը կգտնվի Մայր Եկեղեցիեն բավական հեռու Փարք-Սըրքըս կոչված թաղին մեջ: Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցվո շրջափակի մեջ: Ծերանոցը հիմնադրված է 1955 թվին, եռահարկ շենք մը, լիառատ նվիրատվությամբ ՍԸՐ ԽԱՉԻԿ ՓՈԼ ՋԱԹԸՐԻ, որը Կալկաթա ծնած է և հարըստացած՝ Հոնկ-կոնգի մեջ: Ծերանոցի մեջ պատսպարված են մոտավորապես 25 հոգի, ստանալով թոշակ, բժշկական խնամք և այլ դյուրություններ:

Կալկաթան թեև բնակչությամբ համեմատաբար փոքր գաղութ է, ունի ինը միություն. Նազարեթա Ս. Եկեղեցվո Վարչություն, Հայկական ընկերակցություն, Մարդասիրական ճեմարանի նախկին Սանուց միություն, Տիկնանց բարեգործական միություն, Հայկազյան մշակութային միություն, Հայկական ակումբ, Հայ Մարզական ակումբ, Մարդասիրական ճեմարանի վարչություն և Դավթյան դպրոցի վարչություն: Կալկաթայի այժմյան գաղութը մոտավորապես 450—500 հոգի է:

Ու այսպես հոգևոր այցելություններով, դասավանդությամբ, պատարագելով և քարոզելով անցուցինք մեր օրերը Կալկաթայի մեջ, մինչև մեր վիզայի ժամանակի լրանալը՝ հուլիսի 16-ը: Հուլիսի 16-ին Վարչությունը մեզ ճանապարհ դրավ դեպի Ավստրալիա: Մեր ճանապարհին 24 ժամ անցուցինք Սինգապուրի սակավաթիվ Հայ գաղութի անդամներու հետ, մոտավորապես 35 հոգի: Սինգապուրի մեջ նորեն Հայկական պողոտայի վրա և գրեթե քաղաքի ամենակենդրոնական մասի մեջ ունենք շատ լավ եկեղեցի մը իր երիցատնով և ընդարձակ շրջապատով: Եկեղեցիին հոգատարն է վաճառական Արշակ Գալստյանը և իր երկու պաշտոնյաներ Մելքոն և Մկրտիչ Մարտիրոսյան եղբայրները: Նախ եկեղեցվո մեջ կատարեցինք աղոթք, բաշխեցի Ս. Հաղորդություն, կատարեցի գերեզմանօրհնեք, և երեկոյան գաղութի անդամներուն հետ եղանք ճաշասեղանի մը շուրջ, բոլորին հաղորդեցի Զերդ Սրբության օրհնությունները և բաժանեցի Ս. Էջմիածնի խաչիկներ: Գիշերվան ժամը 10-ին օդանավ առնելով մեկնեցա դեպի Ավստրալիա:

Ամբողջ գիշեր հանգիստ ճամբորդութենե մը վերջ, առավոտյան ժամը 8-ին կժամանեմ Սիդնիի օդանավակայանը: Օդակայան եկած են Տեր Արամայիս քահանան, Սիդնիի Եկեղեցական Վարչության բոլոր անդամներու հետ, հին ծանոթներ և բավական թիվով ժողովուրդ: Կանցնինք սպասման հյուրասրահը, տեսակցություն կունենամ թերթերու թղթակիցներու և հեռուստացույցի պաշտոնյաներու հետ: Մեր ժամանումը նույն երեկոյան սփռվեցավ հեռուստացույցով: Կառքերու մեծ շարքով մը կառաջնորդվինք Սիդնիի Ս. Հարություն եկեղեցին, որ լեցված էր բազմությամբ, ուր մեր աղոթքը ընելեն վերջ, ժողովրդին կբաշխեմ Զերդ Սրբության օրհնությունները:

Մեր ժամանման հաջորդ օրը՝ հուլիսի 19-ին նախագահեցի Սիդնիի Վարչության ժողովին, որոնց ևս պաշտոնապես հայտնեցի Զերդ Սրբության ողջույնները և օրհնու-

Կալկաթայի Մարդասիրական ճեմարանի մի խումբ ուսանողներ:

թյունները: Այս ժողովում որոշվեցավ Հայրապետական Պատվիրակի մեր անդրանիկ պատարագը մատուցանել իտալական մեծ սրահին մեջ, որ կծառայեր մեր ժողովրդին և երիտասարդներուն, որպես ակումբ, քանի որ փոքր էր մեր եկեղեցին ժողովուրդը պարփակելու:

Հուլիս 26, Կիրակի: Ժամը 9-ին կսկսինք առավոտյան ժամերգությունը և ժամը 10-ին՝ Ս. պատարագը: Ժողովուրդը լեցուցած էր եկեղեցին: Տեր Արամայիս քահանան կը կարդա Հայրապետական Պատվիրակի պաշտոնական կոնդակը և ժողովուրդը հոտընկայս կունկնդրե: Կոնդակի ընթերցումեն վերջ կդառնամ ժողովրդին անգամ մը ևս կուտամ բոլորին Ձերդ Սրբության ողջույնները և օրհնությունները, և ապա կխոսիմ հետևյալ բնաբանով. .«Եկայք շինեսցուք սուրբ զիսորանն լուսոյ, քանզի ի սմա ծագեաց մեծ լոյս ի Հայաստան աշխարհիս»: Ս. պատարագեն վերջ Հայրապետական մաղթանք կկատարվի:

Վարչության կարգադրությամբ 26 օր մնացինք «Ավստրալիա» կոչված մեր հյուրանոցը: Առաջին շաբաթը անցուցինք Տեր Արամայիսի հետ այցելություններ տալով Սիդնիի քաղաքապետին, գաղթային նախարարության, ընդհանուր դատախազին, հույն և կաթոլիկ կրոնապետներուն և ընդունիլ փոխադարձ շնորհավորություններ: Ապա կանոնավոր կերպով, ամեն օր այցելեցինք մեր բոլոր ժողովրդին անխտրաբար: Մի քանի անգամ այցելեցինք գաղթակայաններ, և մի անգամ ևս պարզվեցավ մեր աչքերուն առաջ հայ գաղթական ժողովրդի տխուր կյանքը:

Օգոստոսի 2-ին Եկեղեցական վարչությունը ի պատիվ մեր ժամանման, «Ավստրալիա» հյուրանոցին մեջ, 150 հոգի ճաշկերույթ մը տվավ խանդավառ մթնոլորտի մը մեջ:

Օգոստոսի 12-ին Տեր Արամայիս քահանային հետ կմեկնինք Մելբուռն, մեր ճանապարհին՝ երկու օր կմնանք Ավստրալիո մայրաքաղաքը՝ Կանբերա, ուր կայցելենք գաղթային նախարար Սըր Հըբըրթ Օփըմենին, մեր գաղութի ժողովրդի հարցերով. այդ օրերուն թխագույն մորթ ունեցողներուն մուտքը Ավստրալիա կդժվարացնեին: Մեր բացատրություններու վրա սկսան մասնավորապես արաբական երկիրներեն և Հնդկաստանեն գաղթող հայերու պարագաները նկատի առնել: Օգոստոսի 13-ին մեզ հետ ունենալով նաև Մելբուռնի Եկեղեցական Խորհրդի նախագահ Տիար Նազարեթ Գարակեոզյանը և մի քանի հայեր, ծաղկեպսակ կը կդնենք առաջին համաշխարհային պատերազմին մեջ ինկած ավստրալիացի զինվորներու հուշարձանին: Այդ օրվան Կանբերայի լրագիրները լու-

սանկարներով և գրություններով հրատարակեցին մեր հանդիպումները: Կանբերայի մեջ ունինք միայն մեկ ընտանիք հայ:

Օգոստոսի 14-ին երեկոյան կողմը օդանավ առնելով կմեկնինք Մելբուռն, ուր կը հասնինք ժամը 7-ին: Մեզ կդիմավորեն տեղվույն Վարչության անդամները և ժողովուրդը: Կառաջնորդվինք նախ եկեղեցի, ապա մեզ կհյուրասիրե Տիկ. Մարի Քյուրտյանը երկու և կես ամիսներ իր բնակարանին մեջ: Տիկին Մարի Քյուրտյանը առաջին պատերազմեն վերջ իր ամուսնույն հետ գաղթած է Ավստրալիա, լավ գործ ունեցած են, ունի երեք տղա զավակներ և մեկ աղջիկ, թոռներու տեր դարձած այրիացած է, իր բնակարանը դարձուցած է մի տեսակ Վանատուն, ուր կիջեանին Մելբուռն այցելող բոլոր հոգևորականներ և կվայելեն իր մայրական խնամքները: Ինքը գրեթե 70-ի մոտ այրի մըն է:

Օգոստոսի 15-ի երեկոյան կնախագահեմ Եկեղեցական խորհրդի նիստին: Հետ երկար խորհրդակցությանց կորոշենք անպայման մնայուն քահանա մը ունենալ Սելբուռնի Ս. Աստվածածին եկեղեցիի համար, որ մեծ և գեղեցիկ եկեղեցի մըն է, ունի լայն շրջապատ, երիցստուն մը 6 սենյակներով և հարմարություններով, գնված՝ 12000 ավստրալիական ոսկիով: Մնայուն քահանայի մը պահանջքը զգալի կդառնա, քանի որ նոր գաղթողներ կը հասնին Եգիպտոսեն և Մերձավոր Արևելքի մյուս երկիրներեն: Ժողովը միաձայնությամբ հավանություն տվավ մեր առաջարկին, և քահանա պահելու մասին կարգադրություններ ըրինք:

Օգոստոս 16-ին, Վերափոխման Տոնին Մելբուռնի Ս. Աստվածածին եկեղեցվո մեջ նստուցանեմ հանդիսավոր Ս. պատարագ և Տեր Արամայիս քահանան կկարդա Հայրապետական Պատվիրակի պաշտոնի կոնդակը, և ապա կխոսիմ Մայրության գաղափարին շուրջը, և Ս. Էջմիածինն ալ իբրև հոգևոր մայրը հայ ժողովրդին: Եկեղեցին, որ բավական մեծ է, լեցված էր ամբողջությամբ:

Մելբուռն կմնամ երկու ամիս և տասն օր: Այս շրջանին կայցելեմ Տեր Արամայիս քահանային հետ Մասուն Կամպիեռ, Ադելաիտ և Էլիզաբեթ քաղաքները: Առաջինին մեջ կան երկու ընտանիք միայն, իսկ Ադելաիտի մեջ՝ մոտավորապես 100 հոգի: Կայցելեմ բոլորի տունները և կբաշխեմ Ս. Էջմիածնի օրհնությունը: Կմնամ մեկ շաբաթ ու նորեն կվերադառնամ Մելբուռն:

Մելբուռնի մեջ իմ ամենօրյա գործն էր այցելել մեր ժողովրդին, կապել զանոնց Ս. Էջմիածնին և Մայր Հայրենիքին: Իմ այցելություններու ընթացքին քանիցս ականատես և ականջալուր եղա տխուր հուսահատ դեպքերու: Նորեկ գաղթականներ, մասնավորաբար Եգիպտոսեն, որոնք կաշխատին գործարաններու մեջ, գանգատելով իրենց ներկա վիճակեն, ինձ կըսեին. «Սրբազան, եթե մենք գիտենայինք թե Ավստրալիա գալով, ստիպված պիտի լինեինք գրեթե ամբողջ ընտանիքով գործարաններ աշխատել, մենք լավ կընեինք Հայաստան երթալով, քանի որ այնտեղ ալ գործարաններ պիտի աշխատեինք, բայց գոնե այն մեր երկիրն էր»: Երբ գիշեր մը տուն մը այցելությանն գացած էի, ու մենք բոլորս հայերեն կխոսեինք, փոքրիկ մը կամաց մը մոտենալով մորը ականջին բաներ մը փսփսաց: Մորը դեմքին վրա այլայլության նշաններ երևացին, և խորունկ ախ մը քաշեց: Ուզեցի հասկընալ իր հուզման պատճառը: Ցավով և վշտով լի մայրը այսպես ըսավ. դպրոցին մեջ ըսած են երեխաներուն թէ, ամոթ է այս երկրին մեջ անգլերենեն զատ ուրիշ լեզու խոսիլը, մենք ալ պետք է որ խոսինք: Կորսվեցանք, ըսավ խեղճ մայրը, ազգով և լեզվով: Անմիջապես փոխեցինք մեր խոսակցության նյութը արտասահմանի մեր դժբախտություններու մասին:

Ամեն կիրակի անխափան կպատարագեի և կը քարոզեի: Քարոզներուս նյութերը կրոնական զատ այսօրինակ երկիրներու մեջ մեր հայապահպանման և օր մը Հայրենիք դառնալու մեծ ուխտին շուրջ կդառնային:

Այցելություններ տվի պետական բոլոր պաշտոնատանց, հոգևոր իշխանություններու և ընդունեցի փոխադարձ այցելություններ: Նախագահեցի ժողովներուն և ձեռնարկությանց: Մշակեցինք և Ընդհանուր ժողովներով վավերացուցինք մեր Եկեղեցվո վարչության, Տիկնանց, եկեղեցասեր երիտասարդաց միության Կանոնագիր-ծրագիրները, և այլն: Կազմեցինք եկեղեցիներու երգչախմբեր, ուրար կրելու իշխանություն տվի չորս երիտասարդներու, ավելացնելով եղածներու թիվը:

Հոկտեմբերի 26-ին երեկոյան Մելբուռնի Եկեղեցական վարչության հետ կունենանք մեր վերջին ժողովը, ի շարս այլ հարցերու կորոշենք, որ՝ ոչ մեկ հոգևորական, որ չի պատկաներ Ամենայն Հայոց Հայրապետական թեմերուն, եթե իբրև այցելու իսկ գալու լինի առանց Հայրապետական Պատվիրակի գիտության և թույլտվության, իրավունք չունենա խորհրդակատարություն կատարելու Մելբուռնի Ս. Աստվածածին եկեղեցվո մեջ: Վարչական ժողովը նախանձախնդրությամբ

Տ. Հայկազուն արքեպիսկոպոսի հրաժեշտի այցելությունը Բենգալի կառավարչուհի Բաթմաջա Նայդուին:

և միաձայն ընդունեց և արձանագրեց այս որոշումը:

Հոկտեմբերի 27 և 28-ը կանցնեմ Կանբերայի մեջ, ստանալու համար ճանապարհի իմ վիզաները, Ջակարտայի, Սինգապուրի և Հնդկաստանի:

Հոկտեմբերի 29-ին արդեն Սիդնի էի: Այս անգամ բնակությունս կհաստատեմ Սինգապուրաբնակ պարոն Արշակ Գալստյանի տունը: Այստեղ կմնամ ավելի քան մեկ ամիս, ու կը շարունակենք մեր ամենօրյա այցելությունները հայ բնակչության և նորեկ գաղթականներուն:

1964 նոյեմբերի 7-ին, շաբաթ օրը, տեղի կունենա Սիդնիի և շրջակայից եկեղեցիի անդամներու ընդհանուր ժողովը, ուր կը խմբագրենք և կվավերացնենք նոր Կանոնագիր-ծրագիրը, այն ոգիով, ըստ որում, ամբողջ թեմը ենթակա է Ս. Էջմիածնի Ամենայն Հայոց Հայրապետությանը, և կղեկավարվի Նորին Սրբության կողմե նշանակված ներկայացուցիչով: Այս Կանոնագիր-ծրագիրը վավերացվեցավ պետական իշխանության կողմեն:

Ավստրալահայ գաղութը մոտավորապես 75 տարվա պատմություն մը ունի: Համաշխարհային առաջին պատերազմեն վերջ 10—15 ընտանիքներ միայն հաստատվեցան այդ ընդարձակ երկրի զանազան քաղաքներուն մեջ, առավելաբար Սիդնիի և Մելբուռնի մեջ: Երկրորդ համաշխարհային պատերազմեն վերջ նոր գաղթականություն մը ծայր տվավ, Ճապոնեն, ինդոնեզիական կղզիներեն: Իսկ այս վերջին տասնամյակի ընթացքին այնտեղ գաղթեցին Հնդկաստանեն, Եգիպտոսեն և Միջին Արևելքի զանազան երկիրներեն և ցրվեցան զանազան քաղաքներու մեջ: Առ նոյեմբեր 1964 թվական, Պրեզպենի մեջ կային մոտավորապես 25—30 հոգի, Սիդնիի մեջ՝ մոտ 2700 հոգի, Մելբուռնի մեջ՝ 900 հոգի, Մաունթ-Կամպիեռի մեջ՝ 20 հոգի, Ադելաիտի մեջ՝ մոտ 90 հոգի, Փըրթի մեջ՝ 100 հոգի, իսկ Նոր-Զելանդիայի մեջ՝ 12 հոգի: Այս թիվերը սակայն երթալով աճեցին և դեռ կաճեն Միջին Արևելքեն, Եգիպտոսեն և Հնդկաստանեն եկող նոր գաղթականներով: Ասիկա մեր օրերու ազգային մեծագույն ողբերգությունն է:

Ավստրալիան բաժնված է վեց նահանգներու, և յուրաքանչյուր նահանգ ունի իր ուրույն օրենքները, ըստ այսմ նաև մեր եկեղեցիները: Մեր եկեղեցվո ներկայացուցչական կեդրոնը Սիդնին է. Հայրապետական պատվիրակի ընդհանուր փոխանորդը Տ. Արամայիս ավագ քահանա Միրզայանն է, որուն ավագ քահանայության պատիվը շնորհեցիք 1964 սեպտեմբերին մեր միջնորդության վրա: Տեր Հայրը և՛ Ս. Էջմիածնի, և՛ Մայր Հայրենիքի հավատարիմ աշխատող մըն է: Մելբուռնի հոգևոր հովիվն է հոգ. Տ. Ոսկան աբեղա Գալփակյանը, որը նույնպես եռանդուն կերպով լծված է իր ժողովրդանվեր աշխատանքներուն: Տեր Արամայիս քահանան և Տ. Ոսկան աբեղան իրենց բոլորանվեր ծառայությամբ, արժանի են մեր գնահատության:

Ավստրալիո հին հայերը, որոնք գաղթած էին Առաջին համաշխարհային պատերազմեն վերջ, ընդհանրապես առևտրականներն են, ունին սեփական տուներ և լավ վիճակի մեջ են: Իսկ այս վերջին տասնամյակի մեջ գաղթողներուն կարելի է ըսել 95 տո հարյուր կաշխատին գործարաններու մեջ: Անձնական գործ ունենալը մեծ դրամագլխի կարոտ է և դժվար, որմե զրկված են նոր գաղթողները: Երկրի ապրելու պայմանները թանկ են, տուներու վարձերը բարձր են: Իսկ ինչ որ մեզ հայերուս համար ամենավտանգավոր և ցավալին է, այնտեղ կկորսվին մեր լեզուն, մեր մշակույթը, մեր ազգային ավանդությունները, մեր երիտասարդությունը և, մանավանդ, մեր ապագա սերունդը: Զորս անդամներով ընտանիքի հոր աշխատավարձը չի կարող պահել ընտանիքը, կինը կամ զավակը աշխատությամբ պետք է օգնե իր հորը: Գաղթականներու մեծ մասը տասը տարիներ շարունակ պարտքի մեջ են:

Ավստրալիան քրիստոնյա երկիր է, և հայ երիտասարդներ ամուսնություն կկնքեն ավստրալացի աղջիկներու հետ, ընդմիշտ կորսվելով մեզ համար...

Նոյեմբեր ամսվան մնացյալ օրերը կանցնենք դարձյալ այցելություններով, պատարագելով և քարոզելով: Հնդկաստանի Վարչութենեն կստանամ վերադարձի անմիջական հեռագիր մը: Կհետապնդեմ Հնդկաստան մուտքի տնական բնակության վիզաս, որ դեռ չէր հասած:

Նոյեմբերի 29-ին Սիդնիի Ս. Հարություն եկեղեցիի մեջ կմատուցանեմ հրաժեշտի վերջին պատարագս և դեկտեմբերի 1-ի կեսօրվան ժամը 1-ին Վարչության անդամներով Սիդնիի օդանավակայան ենք, հրաժեշտ առնելով բոլորեն կթոչիմ դեպի Սինգապուր, ուր կժամանեմ երեկոյան ժամը 8-ին: Մեզ դիմավորելու եկած էին տեղվույն գաղութի անդամները, և կառաջնորդվինք Քոքփիթ հյուրանոցը: Կմնամ այստեղ երեք օր ու կհաջողիմ ստանալ Հնդկաստան մուտքի տուրիստական վիզաս: Կուզեմ այստեղեն այցելել Ջակարտա և Սուրաբայա, բայց Ջակարտան խառնակ վիճակ մը ունենալուն համար, անկարելի կլինի մեզ մեկնել: Կշարունակենք մեր այցելությունները տոլովրդին, եկեղեցվո մեջ կկատարեմ փոքրիկ պաշտամունք մը, անգլերեն կարդ քարոզ մը վերջ կխոստովանցնեմ ժողովուրդը, կհաղորդեմ բոլորին, ու գիշերվան ժամը 10-ին տեղական ժամով կմեկնինք օդանավակայան և ժամը 11-ին հրաժեշտ տալով բոլորին կթոչիմ դեպի Կալկաթա: Երկու և կես ժամեն կը ժամանեմ Կալկաթայի օդանավակայանը:

Դեկտեմբերի 6-ը Կալկաթայի անգլիական եկեղեցվո Եպիսկոպոսական աթոռի հաստատման 150-ամյակն էր: Մեր եկեղեցին պաշտոնական հրավեր ստացած էր: Վարչությունը ուզած էր, որ հայ եկեղեցին կարևոր դերով մը մասնակցեր, ու մենք Տ. Գեղամ վարդապետի, Վարչության անդամներու և ժողովրդի հետ ներկա եղանք զգեստավորված Ս. պատարագի եպիսկոպոսական լրիվ հանդերձանքով: Այս հանդիսությանց հրավիրված էին ամբողջ Հնդկաստանի, Ցեյլոնի, Ծայրագույն Արևելքի եպիսկոպոսներ, ինչպես նաև Ամերիկայեն և Անգլիայեն եպիսկոպոսներ: Հրավիրված էր Բենգալ նահանգի կառավարչուհին, օրիորդ Պաթմաջա Նայդուն, բարձրաստիճան հյուրեր և այլն: Արարողությունը տևեց մոտ մեկ և կես ժամ, ու վերջին պահպանիչը և արձակման «Հայր մերը» ես արտասանեցի հայերեն լեզվով:

Նոր-տարվա և ծննդյան տոները անցնելեն վերջ հետամուտ եղանք ձեռք բերելու մեր Հնդկաստան մնալու մեկ տարվան բնակության արտոնությունը: Այս առթիվ դիմումներ կատարեցինք պետական պաշտոնատուներու, գնացինք մինչև Դելի, ներկայացանք նախագահ դոկտ. Ռադհաքրիշնայինի, ներքին գործոց նախարար Գյուլզարի Լալ Նանդայինի, նախարար Թովմասին և ուրիշներու: Մեկ տարվան արտոնությունը շնորհեցին հունիսին: Ապա Դելիեն շարունակելով մեր ճանապարհը, թեմական այցելության ելա նախ Բոմբեյ, անցա Մադրաս և վերադարձա Կալկաթա:

Կալկաթա մեր բնակության շրջանին պատրաստեցինք Ջերդ Սրբության այցելության մարմարյա տուխտակ-հիշատակարաններ, և զետեղեցինք Նազարեթաս Ս. Եկե-

Հնդկաստանի պարենավորման նախարար Ա. Մ. Թովմասը և պրոֆ. Ք. Ս. Զասրջին Կալկաթայի վարչության անդամների հետ:

ղեցվո, Մադրասի եկեղեցիի որմերուն վրա. նաև Բոմբեյի եկեղեցիի մեջ:

Զեր Սրբության սպրիլլան մեր նահատակաց հիշատակը ոգեկոչող սրբատաո կոնդակը մեծ հուզումով և երախտագիտությամբ ընդունեց գաղութահայությունը, ընդ որս ու հնդկահայությունը: Եկեղեցական աղոթքներ և սգահանդեսներ կազմակերպեցինք և կատարեցինք մեր բոլոր թեմերու մեջ, և շատ խոնարհ հուշարձանով մը հավերժացուցինք մեր նահատակներու անմահ հիշատակը Կալկաթայի Նազարեթա Ս. եկեղեցվո գավթին մեջ: 1965 ապրիլ 24-ի շաբաթ օրը Ս. պատարագ և հոգեհանգիստ կատարեցինք, իսկ 25-ին նահատակաց հուշարձանի բացումը Կալկաթայի մեջ, Ես օրվան պատարագիչն էի, և իմ դամբանական քարոզես վերջ խոսեցավ նաև մեր եկեղեցիի մեջ անգլիական մետրոպալիտը Գեր. Լակ-Տասա-Տը-Մել եպիսկոպոսը, վեր առնելով հայ ժողովրդի դերը և նահատակությունը քրիստոնեական հավատքի պաշտպանության համար դարերու ընթացքին: Ս. պատարագեն վերջ կատարեցինք հուշարձանի բացումը:

Ապրիլ 25-ի երեկոյան ժամը 6-ին անգլիացի մետրոպոլիտը Կալկաթայի անգլիական Սենթ-Փոլ Մայր եկեղեցվո մեջ հայ նահատակաց հիշատակին աղոթքի երեկո մը կազմակերպած էր, ուր լեցված էին Կալկաթայի ամբողջ հայ ժողովուրդը, ինչպես նաև իրենց հավատացյալ ժողովուրդը, և կազմված էր ճոխ հայտագիր մը աղոթքի, երգի, մաղթանքի և քարոզներու, որոնց գլխավոր առանցքը հայ նահատակներ և ժողովուրդն էին: Արարողության վերջավորության անգլերենով շնորհակալության ուղերձ մը կարդացի մետրոպոլիտին և իր ժողովրդին, որ իրենց աղոթքներով և երգերով փառավորեցին հիշատակը մեր նահատակներուն: Պահպանիչով և «Հայր-մեր»-ով փակեցինք երեկոյան աղոթքի այս ժամը:

1965 թվի հունվարին ուրար կրելու իրավունք տվի երկու դպիրներու, և Տեր Գեղամ աբեղա Զաքարյանին վարդապետական չորս աստիճաններ շնորհեցի:

Փետրվարի 16-ին 1965 Բոմբեյի ժողովրդի գրավոր դիմումնագրի վրա Սուրբ Պետրոս եկեղեցիի համար քահանա ձեռնադրեցի Գևորգ Ստեփանյան անուն պատվական և լավ զարգացման տեր երիտասարդի մը և վերանվանեցի զայն տեր Վազգեն քահանա:

Զերդ Սրբության կարգադրությամբ Տ. Ոսկան աբեղա Գալբաքյանը իբրև հոգևոր հովիվ Մելբուռնի հայ գաղութին և շրջագայից, 1965 թվի օգոստոսին հասավ Կալկաթա. և այնտեղ մնալով մոտ տասը օրեր, մեկնեց Մելբուռն, իր պաշտոնատեղին:

Անցյալ տարվան մարտին և այս տարվան ապրիլ-մայիսին Կալկաթա հանդիպեցան Հայաստանի Վարչապետ մեծարգո Անտոն Քոչինյանը և մեծարգո գիտնական, մաթե-

Կալկաթայի Հայոց նկեղեցու գավթում Ապրիլյան Եղեռնի հուշարձանի բացումը:

ՍԱ-3955.

մատիկոս Սերգեյ Մերգելյանը, Կալկաթայի և Բոմբեի հայ ժողովուրդը արժանավայել կերպով ընդունեց հարգելի հյուրերուն և ճանապարհ դրավ:

Անցյալ տարվան դեկտեմբերի 21-ին Տ. Կոմիտաս սրբազանը Զերդ Սրբության հրամանով հասավ Բոմբեյ, մեզ հետ միասին մեկնելու Քերալա նահանգի Քոթայամ քաղաքը իբրև ներկայացուցիչ Զերդ Սրբության, մասնակցելու Քոթայամի Կաթողիկոսության ճեմարանի 150-ամյակի հանդիսությանց: Կոմիտաս սրբազանը մեկնեցավ Կալկաթայեն 7-ին մարտի, այցելելեն ետր նաև Ավստրալիայի հայ համայնքը:

Զերդ Սրբության գահակալության տասնամյակին անձնագրային դժվարության պատճառով, թեև ես անձամբ չկարողացա ներկա գտնվիլ Ս. Էջմիածին, բայց հնդկահայ գաղութը ունեցավ իր երկու ներկայացուցիչները՝ հանձինս Հովսեի Հարությունի և Սամ Ավետի:

Մայր Աթոռ Ս. Էջմիածին գալու առիթով հունիսի առաջին կեսին պաշտոնական հրաժեշտի այցելություններս տվի կառավարական և կրոնական իշխանությանց Կալկաթայի, և նամակներ գրեցի Սիդնի, Մելբուռն և Բոմբեյ՝ մեր հոգևորականներուն, և վարչություններուն, թե ես կմնամ իբրև Հայրապետական Պատվիրակ ցնոր տնօրինությունն, որով պետք է շարունակվի մեր անվան հիշատակությունը ի ժամ Ս. պատարագի, որպեսզի չկարծվի, թե թեմը կմնա անգլուխ վիճակի մեջ, հունիսի 14-ին պարոն Կարո Մարտինի հետ կմեկնինք Դելի: Երկու օրերու մեջ ըստ կանխավ առնված ժամադրությանց, կհանդիպիմ նախագահ դոկտ. Ռադհակրիշնային, վարչապետ Ինդիրա Գանդիին, ներքին գործոց նախարար Կյուլզարի Լալ Նանդային, պարենավորման նախարար Ա. Մ. Թովմասին, Հորդանանի իմ հյուպատոս Քամիլ Համուտին և Լիբանանի հյուպատոս Մուհամմեդ Հաֆզին, բոլորին կհայտնեմ իմ շնորհակալություններս և հրաժեշտ կառնեմ ժամանակավորապես:

Հունիսի 17-ին առավոտյան ժամը 10-ին Դելիեն օդանավ առնելով կժամանեմ Մոսկվա՝ ժամը 4-ին: Գիշեր մը Մոսկվա մնալով շաբաթ օր երեկոյան ժամը 11-ին Ս. Էջմիածին կժամանեմ: